

ՏԻԳՐԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ,
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱԴԱԼՅԱՆ,
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՕՀԱՆՅԱՆ

ՆՈՐԱՀԱՅՑ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀՆՁԱՆ ԿԱՊԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆՈՒՄ

Բանալի բառեր – խաղողագործություն, գինեգործություն, միջնադար, պեղումներ, հուշարձան, կարաս, հնագիտական գտածոներ



2016 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախումբը (ղեկավար՝ Հ. Օհանյան, հնագետներ՝ Տ. Ալեքսանյան, Հ. Բադայան, Ճարտ. Գ. Գյուլամիրյան) պեղումներ իրականացրեց Սյունիքի մարզի Արծվանիկ և Չափնի գյուղերի վարչական տարածքի մի շարք հուշարձաններում, որոնք գտնվում էին Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի պոչամբարին հարող տարածքներում:

Ի թիվս ճարտարապետական մի շարք կառույցների և առանձին շինվածքների՝ հայտնաբերվեց նաև միջնադարյան հնձան: Մույն հաղորդմամբ ներկայացվում է նորահայտ հնձանի պեղումների արդյունքները՝ միաժամանակ որոշակի դիտարկումներ կատարելով տարածաշրջանի խաղողագործության և գինեգործության վերաբերյալ:

Հնձանի պեղումները

Հնձանը գտնվել է Արծվանիկ գյուղից մոտ մեկ կմ հարավ-արևելք գտնվող բլրի հարավահայաց լանջին: Հայտնաբերվել են հնձանի հիմնական բաղադրիչները՝ առագաստը, տաքարը, և հարավային մասում առանձնացված մառանի հատվածը: Կառույցները շարված են տեղական կրաքարով և համեմատաբար լավ են պահպանված:

Հնձանի առագաստը գտնվում է համակառույցի հյուսիսային մասում: Այն 2,90x1,85 մ չափերի և 0,50 մ խորությամբ ուղղանկյուն ավազան է, որի պատերը՝ բացառությամբ արևմտյանի, լավ պահպանվել են: Ավազանի հյուսիսային և արևելյան պատերը կառուցված են լավ մշակված, ուղղահայաց դիրքով դրված խոշոր սալաքարերով: Հյուսիսային պատի մեջ կա 0,28 մ բացվածքով և 0,45 մ խորությամբ մի խորշ (պատրիհան): Հարավային պատը շարված է մշակված խոշոր քարերով և ծառայել է որպես միջնորմ ավազանի և կից սենյակի միջև: Արևմտյան պատը ավերված է, սակայն պահպանված հատվածների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այն կառուցվել կամ հավանաբար վերանորոգվել է կրաքարի ճեղքված մանր բեկորներով:



Աղյուսակ 1: 1- հնձանի ընդհանուր տեսքը: 2- հատակագիծ:
 3- երկայնական կտրվածք:
 (Չափագրությունը՝ Գ. Գյուլամիրյանի):

Ավագանին ամբողջությամբ սվաղված է անջրաթափանց կրաշաղախի հաստ շերտով, որը լավ է պահպանվել հատկապես հատակի մասում: Առագաստի հատակը արևելք-արևմուտք ուղղությամբ ունի թեքություն, և արևելյան (բարձր) մասում պահպանվել է մոտ 0,05 մ խորությամբ և 0,70 մ տրամագծով մզարանը, որտեղ գետեղվել է խաղողի ճմլված զանգվածը և ծանրոցի օգնությամբ քամվել քաղցուի մնացորդը, ապա առագաստի հարավային միջնորմում տեղադրված խողովակով լցվել տաքարի մեջ: Պեղումների ընթացքում հայտնաբերվել է նաև այդ խողովակի տանձաձև խցանը (աղ. 2, նկ. 1):

Առագաստին հարավից կից է թերի պահպանված մի սենյակ, որտեղ կառուցվել են տաքարները (ամբողջական և թերի): Պեղումներով հնարավոր եղավ վավերացնել հիշյալ սենյակի հյուսիսային պատը և արևելյան պատի մի հատվածը (երկ.՝ 1,80 մ, բարձր.՝ 0,70 մ)՝ կառուցված խոշոր, լավ մշակված քարերով: Հնձանի պահպանված տաքարը գտնվում է սենյակի արևմտյան մասում: Տաքարի պատերը շարված են մանր քարերով և սվաղված կրաշաղախով, այն ունի 1,65 մ խորություն, լայն հատակ, որի կենտրոնում պահպանվել է քաղցուի նստվածքը հավաքելու համար արված 0,10 մ խորությամբ պարզարանը: Տաքարի քարե կափարիչը չի պահպանվել:

Նշված տաքարից արևելք, մոտ 0,35 մ խորությունից հայտնաբերվեց մեկ այլ հորի հատված, որի քայքայվածության պատճառով՝ հնարավոր եղավ փաստագրել միայն նրա բերանը (տրամագիծը՝ մոտ 0,40 մ)՝ ամրացված կրաշաղախով: Ենթադրելի է, որ նշված հորը ևս ծառայել է քաղցուի կուտակման համար, որը քանդվելուց հետո չի օգտագործվել և ծածկվել է հողով:

Համալիրի մաս են կազմում նաև պեղումներով հայտնաբերված զույգ կարասները, որոնք գտնվում էին արտադրական կառույցից հարավ: Դրանցից մեկն ամբողջական էր, դրված ուղիղ դիրքով, բերանը ծածկված հարթ սալաքարով: Կարասը ժամանակին վերանորոգվել է, ինչի մասին են վկայում անոթի ուսին մանր խեցատներով և կրով արված ամրացումները: Երկրորդ կարասը հայտնաբերվել է ուղիղ դրված, սակայն ճզմված վիճակում: Հարկ է նշել, որ այս տարածքից հայտնաբերվել են նաև նմանատիպ կարասների առանձին մասեր (աղ. 2, նկ. 3-4), որոնք ենթադրել են տալիս, որ կարասների թիվը եղել է երկուսից ավելի:

Գտածոները

Հնձանի պեղումներով ի հայտ եկած հնագիտական նյութերը մեծաքանակ չեն: Դրանք հիմնականում խեցեղեն իրեր են, որոնք աչքի չեն ընկնում ձևերի բազմազանությամբ, պատրաստման որակով և գեղարվեստական հարդարանքով: Պեղումներից հայտնաբերված ամբողջական նյութերից է գինու կարասներից միայն մեկը: Այն կարճ վզով, 0,85 մ բարձրությամբ, 0,70 մ լայնությամբ և 0,30 մ բերանի բացվածքով, շուրթը խորը կետերով զարդար-

ված անոթ է, որի իրանին չորս շաքով արված են պարագծով անցնող զարդագոտիներ: Կարասների այս տեսակը բավականին տարածված էր XI-XIV դարերում, և հայտնի են համաժամանակյա մյուս հուշարձաններից ևս¹: Խեցեղեն իրերից առանձնապես նշելի են կարմրափայլ քրեղանի և սափորի մասերը. վերջինիս իրանին պահպանվել են փայլեցումով արված գծագարդեր (աղ. 2, նկ. 5): Խեցեղեն հավաքածուի մեջ առկա են նաև թասեր (աղ. 2, նկ. 6-7), որոնց բազմազան օրինակները (լայն կամ նեղ պսակով, օղակաձև կամ հարթ հատակով, զարդերով կամ փայլեցումով) լայն տարածված են եղել հատկապես XII-XIV դարերում և հայտնի են այդ դարաշրջանի գրեթե բոլոր հուշարձաններից²: Խուփերի թերի օրինակները երեքն են, որոնց եզրերը հարդարված են ալիքագարդով և թվագրվում են XIII-XIV դարերով³ (աղ. 2, նկ. 8-9):

Գտածոների թվում է նաև միակ մետաղե առարկան՝ բրոնզե սրածայր կեռիկը, որը, ամենայն հավանականությամբ, օգտագործվել է ձկնորսության մեջ (աղ. 2, նկ. 2):

Փոքր թիվ են կազմում նաև քարե գործիքներն ու պարագաները: Դրանցից կարելի է առանձնացնել մոտ 0,40 մ երկարությամբ քարի բեկորը, որի վրա պահպանվել է անասուն կապելու համար արված անցք: Դրանք հիմնականում նախատեսված են եղել մթերքները և զինին տեղափոխող բեռնակիր կենդանիներին կապելու համար⁴: Քարե մյուս գտածոն ավազանը տաքարին միացնող խողովակի չեչաքարե խցանն է, որն ունի 10 սմ ընդհանուր երկարություն և գլխիկի հատվածում՝ 9 սմ տրամագիծ: Քարե առարկաների թվում են նաև աղորիքի և սանդղոթի մասերը:

Հնձանի պահպանված հատվածների ուսումնասիրությամբ և հնագիտական նյութերի քննությամբ կառույցը թվագրվում է XII-XIV դարերով⁵: Նման թվագրության համար հիմք են հանդիսանում հատկապես խեցեղեն իրերը:

¹ Տե՛ս **Առաքելյան Բ., Կարախանյան Գ.**, Գառնի III, Հնագիտական պեղումներ Հայաստանում, Երևան, 1962, թիվ 10, էջ 37-42; **Խաչատրյան Ժ., Կանեցյան Ա.**, Գառնի գյուղի տարածքում 2001 թ. կատարված պեղումները // Հին Հայաստանի մշակույթը, Երևան, 2002, թիվ 12, էջ 48-51:

² Տե՛ս **Պետրոսյան Հ.**, Գառնին 9-14-րդ դարերում, Երևան, 1988, էջ 60-61, **Kalantaryan A., Karakhanyan G., Melkonyan H., Petrosyan H., Hakobyan N., Babayan F., Zhamkochyan A., Nawasardyan K., Hayrapetyan A.**, Armenia in the cultural context of East and West, Ceramics and glass (4th-14th Centuries), Yerevan, 2009, p. 130:

³ Տե՛ս **Հարությունյան Ս.**, Անբերդ, Երևան, 1978, էջ 101-102; **Բարաջանյան Ա., Միրիջանյան Դ.**, Թեղենյաց վանքի խեցեղենը // «ՊԲՀ», 2013, թիվ 1, էջ 140-141:

⁴ Տե՛ս **Թումանյան Գ.**, Հնձանային մշակույթը Հայաստանում, Երևան, 2008, էջ 53:

⁵ Տե՛ս **Հարությունյան Ս., Քալանթարյան Ա., Պետրոսյան Հ., Սարգսյան Գ., Մելքոնյան Հ., Հոբոսյան Ս., Ավետիսյան Պ.**, Գինին հայոց ավանդական մշակույթում (այսուհետև՝ Հարությունյան Ս. և այլք), Երևան, 2005, էջ 27-30:



Աղյուսակ 2: Հնագիտական գտածոները:

Դիտարկումներ Սյունիքի գինեգործության վերաբերյալ

Ըստ ընդունված տեսակետի՝ Հայաստանում խաղողագործության և գինու արտադրության հիմնական գոտիներից էին Արարատյան դաշտը և նրան հարող նախալեռնային գոտին, հյուսիսարևելյան շրջանները, Վայոց Ձորը և Սյունիքը¹:

Հարկ է նշել, որ Սյունիքի խաղողագործության և գինեգործության վերաբերյալ վիճաբանական, մատենագրական և հնագիտական տվյալները առատ չեն: Բովանդակային առումով դրանք կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝ ա) տեղեկություններ տարածաշրջանում խաղողի այգիների առկայության վերաբերյալ, բ) գինու արտադրությանը վերաբերող առկա և հիշատակվող հնձաններ:

ա) Սյունիքում խաղողի մշակությանը վերաբերող կարևոր տեղեկություններ է փոխանցում XIX դարի տեղագիր Ն. Տեր-Ավետիքյանը: Նրա վկայությամբ՝ Սյունիքի տարածքում խաղող է աճում միայն երկրի հարավային մասերում ու մի քանի ձորերում: «Օրինակ՝ Տաթևի շուրջը չի աճում ոչ խաղող, ոչ թուզ, բայց երբ մի կէս ժամով իջնում էք վանքի ձորը, Սատանի կամուրջի և Անապատ կոչուած մինաստանի մոտ՝ այդտեղ կան խաղողի, թթի այգիներ, թզենի և այլն»²: Սյունիքի ձորերում խաղող աճեցնելու մասին են վկայում նաև Ե. Լալայանի հաղորդումները: Ներկայացնելով Գորիսի տեղագրությունը՝ ազգագրագետը նշում է, որ նրանից հարավ տարածվող ձորն ամբողջովին պատված էր այգիներով, «... ուր բացի խաղողի որթից, կան նաև թթենիներ, կեռասենիներ, խնձորենիներ և այլն»³:

Գորիսի շրջանի ձորերում խաղողի այգու մասին է վկայակոչում նաև Ստեփանոս Օրբելյանը: Թվելով եպիսկոպոսանիստ Տաթևին նվիրաբերված գյուղերն ու կավածքները՝ պատմիչը նշում է, որ Բաբկեն իշխանի դուստր Համասպրուհին վանքին է ընծայում Հալիքի⁴ ձորահովտում գտնվող այգին⁵ (միջնադարում այգի բառը վերաբերել է միայն խաղողի որթին)⁶:

բ) Ե. Լալայանը տեղեկություններ է հաղորդում նաև Գորիսի շրջակայում եղած գինու հնձանների մասին: Վերոնշյալ ձորը նկարագրելիս հետազոտողը

¹ Տե՛ս Հովհաննիսյան Ն., Եսայան Ա., Բորիսյան Ա., Դալլաքյան Մ., Հորոսյան Ս., Գասպարյան Բ., Հայկական խաղող և գինի, Երևան, 2017, էջ 152:

² Տեր-Ավետիքեան Ն., Տեղագրական նամականի, Տիփլիս, 1888, էջ 17, Լալայան Ե., Զանգեզուրի գաւառ, Թիֆլիս, 1899, էջ 40:

³ Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 32:

⁴ Հալէ կամ Հալիս – Հաբանդ գավառի գյուղերից է, ներկայումս կոչվում է Հալիձոր: Տե՛ս Ալիշան Ղ., Միսական, Վենետիկ, 1893, էջ 256:

⁵ Տե՛ս Օրբելյան Ստ., Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 211: Ե. Լալայանը ևս նշում է, որ այս ձորը լի է խաղողի այգիներով: Տե՛ս Լալայան Ե., նշվ. աշխ., էջ 40:

⁶ Տե՛ս Հորոսյան Ս., «Այգին» միջնադարյան հայերեն վիճակագրություն // Հայ ժողովրդական մշակույթ, Երևան, 2004, թիվ 12, էջ 80-85:

արձանագրում է, որ նրա երկու լանջերին կան մեծ թվով քարայրներ և ժայռափոր հնձաններ՝ եզրակացնելով, որ «հին ժամանակներում էլ այս ձորն առատ է եղել խաղողի որթերով»¹: Գորիսի տարածաշրջանի գինեգործության մասին է վկայում նաև Տաթևի մեծ անապատի հարևանությամբ պահպանված հնձանը (XVII-XVIII դդ.), որը մեզ է հասել կիսավեր վիճակում²: Սյունիքից մեզ հայտնի մեկ այլ հնձան հգտնվում է Մեղրիի տարածաշրջանում՝ Կարձևան գյուղում, կառուցված 1890 թ.³: Ղ. Ալիշանի բնորոշմամբ այս գյուղը հայտնի էր գինեգործությամբ, որի փրփրուն գինին մեծ համբավ ուներ⁴:

Վերոհիշյալ դիտարկումներին զուգահեռ՝ հարկ է նշել, որ հրապարակում առկա նյութերի շարքում Կապանի տարածաշրջանի գինեգործությանը վերաբերող փաստերն առայժմ սակավաթիվ են: Ներկայումս հայտնի են միայն Վահանավանքի պեղումների ընթացքում⁵ կամ տարբեր վայրերից պատահաբար գտնված՝ գինու միջնադարյան կարասները: Եվ խնդրի վերաբերյալ առայժմ միակ խոսուն վկայությունը մեր պեղումներով փաստագրված հնձանն է⁶:

Ամփոփելով նկատենք, որ Սյունիքի հնագիտական հուշարձանների ուսումնասիրություններն ու դրանցով ստացված սակավաթիվ տվյալները, հնձանային համալիրների սակավաթիվությունն առայժմ հնարավորություն չեն ընձեռում ավելի հանգամանալից խոսելու տարածաշրջանի գինեգործական մշակույթի մասին: Առկա հետազոտությունների և արտեֆակտների հիմամբ կարելի է միայն ենթադրել, որ ժամանակին հնձանների թիվն անհամեմատ մեծ է եղել: Կասկածից վեր է, որ շրջանի խաղողագործությանը մեծ վնաս են հասցրել վաչկատուն ցեղերի ասպատակությունները⁷ և մուսուլման տարրի ներթափանցումը, որի ներկայությունը Սյունիքում բավականին սովոր էր: Գինեգործության վրա կործանարար ազդեցություն ունեցան նաև գինու վերաբերյալ մուսուլմանների կրոնական արգելքները, ինչի հետևանքով հատկապես XVI-XVII դարերում ավերվում և ամայանում է խաղողի այգիների մեծ մասը⁸:

¹ **Լալայան Ե.**, նշվ. աշխ., էջ 32:

² Տե՛ս **Հասրաթյան Մ.**, Տաթևի Մեծ անապատի ճարտարապետական անսամբլը // «ԲԵՀ», 1969, թիվ 1, էջ 255:

³ Տե՛ս Սյունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակ, Մեղրիի շրջան գ. Կարձևան:

⁴ Տե՛ս **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 305:

⁵ Տե՛ս **Գրիգորյան Գ.**, Վահանավանք, Երևան, 2007, էջ 160, աղ. XVIII:

⁶ 2012 թ. Կապանի Շահումյան բանավանի տարածքում կատարված պեղումների ժամանակ հայտնաբերվել են հնձանի ավազանի նմանվող կառույցի հետքեր: Ըստ պահպանված մասերի ուսումնասիրության՝ ավազանն ունեցել է 1.2 մ երկարություն և թվագրվում է XII-XIII դարերով: Տե՛ս **Բեգլարյան Հ.**, Երկրագործական մթերքների վերամշակումը միջնադարյան Հայաստանում, Երևան, 2014, էջ 139-140:

⁷ **Օրբելյան Մտ.**, նշվ. աշխ., էջ 321:

⁸ **Հարությունյան Ս.** և այլք, նշվ. աշխ., էջ 235:

Тигран Алексанян, Арутюн Бадалян, Ованес Оганян – Новонайденная средневековая давильня винограда в Капанском регионе

В 2016 г. археологическая экспедиция Института археологии и этнографии НАН РА провела археологические исследования на территории сел Арцваник и Чапни Сюникского марза. В ходе работ были исследованы территории, расположенные вблизи хвостохранилища Зангезурского медно-молибденового комбината, а также проведены раскопки. Целью раскопок было выявление и изучение археологических памятников окрестностей хвостохранилища.

Среди многочисленных архитектурных сооружений и отдельных построек была обнаружена и средневековая давильня винограда. В данной статье представлены основные результаты раскопок новонайденной давильни и одновременно рассмотрены некоторые вопросы виноградарства и виноделия в Сюнике.

**Tigran Aleksanyan, Harutyun Badalyan, Hovhannes Ohanyan –
*The Newly Found Medieval Winepress in Kapan Region***

In 2016 archeological expedition of the Institute of Archeology and Ethnography of the National Academy of Sciences of Armenia conducted archaeological research in the territory of the villages of Artsvanik and Chapni of Syunik Marz. In the course of the work, the territories located near the tailing dump of the Zangezur Copper and Molybdenum Combine were investigated, as well as excavations were carried out. The purpose of the excavations was to identify and study archaeological monuments of the surroundings of the tailing dump.

Among the numerous architectural structures and individual buildings, a medieval winepress was also found. This article presents the main results of the excavations of the newly found winepress, as well as considers some issues of viticulture and winemaking in Syunik.